գուտ և ի չահ աստուածասէր աղօթողաց մերասեռ ազանց. զոր եթէ հաճելի լիցի կամաց ձերոց՝ Տեառն փառք։ Արդ եղեւ զրաւ սորին թվականութեանս Հայոց Մեծաց ՌԿԵ ամին յամենանն դեկտ. ԺԷ, և ի ՌԶՃԺԶ ամի (Փբրկչին) ի հայրապետութեանն Էջմիածնա սուրբ յաթոռոյն կենդանի նահատակ/ն Տեառն Տէր Մելքիսեդեկ կաթողիկոսին. այլ և Կիլիկեցո զաւառին Տէր Յովհաննէս քաջ բարեբնապետի. ի սոցին ժամանակս հանդիպեցաւ տար սորին։ Այլ և ի թագաւորութեան քրիստոնէից լէհ ազգին բարեպաշտ արքայի Իրրորդ Զիկմունտին, զոր Տէր Աստուած զինքն անսասան պահեսցէ երկար ամաք։ Արդ ազաչեմ զամենեսեան որք հանդիպիք այսմ գրիս, յիշեսջիք ի բարի և զծնողս իմ՝ ի Քրիստոս հանգուցեալ Բաղէշցի Քարմատէնց զՄուրատն, և զմայրն իմ զԱննա. այլ և զպապն իմ զՏէր Սիմէոն քահանայն, և զամենայն ազգայինս իմ։ Եւ նա ինքն որ առատն է ի տուրս բարեաց, կրկնակի բարութեամբ զփոխարէն պարգեւեսցէ մեզ և թողութիւն շնորհեսցէ յանցանաց ձերոց. և ձեր սուրբ աղօթիւք զմեզս մեր ընդեսցէ. այլ և զնընջեցեալսն՝ խաչին լուսոյ և երկնից արքայութեան արժանի արասցէ. որում փառք յաւիտեանս. ամէն։ [Մաղմոս տպագրեալ]։

1617-8.

Եւ տրուպս քահանայից, մանաւանդ թէ և ամենայն քրիստոնէից Յակոբ երեցս, ցանկացող եղեալ պատմութեան Սրբոցս, և ի հարկէ յանձին կալեալ՝ ձեռն արկի ի գծագրութիւն սորա. զի վասն ծովացեալ մեղաց իմոց Այսմաւուրքն և Ճաշոցն և շուրջառ մի այրեցաւ ի մէջ եկեղեցւոյն, կայծ հասեալ ի հրագէ, յաւուր տօնի Սրբոյն Ստեփաննոսի Նախավկային, և յերեկոյէ մինչեւ ցառաւօտն ծխեալ ծախեցան. և վաղորդայն առաւօտուն պահուն գնացեալ իմ և բացեալ զեկեղեցին, տեսի լի ծխով, և դողումն կալաւ զիս. կարծէի թէ ամենայն եկեղեցին բորբոքեալ այրէր. և մտեալ ի ներքս՝ տեսի զերկոսին գրեանսն ի վերայ միմեանց հրացեալ. Ճաշոցն ամենեւին այրեալ, և Այսմաւուրքն կիսայրեաց ծխայր. և ես եղկելիս ի մեծ կսկծոյս մեծակական ձայնիւ աղաղակեցի, ողբս և վայս կարդալով, որպէս ոք ի վերայ մեռելոյ սիրելոյ. և այսպէս զրկեալ կողոպտեցայ ի մեծամեծ գանձուցս յայսցանէ, և չկայր միւս այլ Ճաշոց կամ Այսմաւուրք՝ ընթեռնուլ յեկեղեցին. և մեծաւ ջանիւ հազիւ առաք զգաղափար սորա ի մայրաքաղաքն ի Լովայ. և ես անվարժ գոլով գրչութեան՝ հարկեցայ ի գործ, և ապաւինեալ յողորմութիւնն Աստուծոյ սկսայ, և նորին շնորհաք յանգ հասեալ կատարեցի։ Արդ գրեցաւ ցայսմաւուրս ձեռամբ յոգնամեղ Յակոբ երիցուս, թվին ՌԿԶ, ի աշխարհս Իլախաց, ի նորաշէն քաղաքս Զամօսցա, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին և Ս. Լուսաւորչին և այլոց խորանացս. ի ժամանակս հայրապետութեան Ս. Էջմիածնայ Տեառն Տէր Մելքիսեդիկի կաթողիկոսին, և թագաւորութեան Իլախաց՝ Զիկմունդի Գ.ի, և իշխանութեան քաղաքիս Պր. Թովմասին՝ երիտասարդ իշխանին, որ հայրենակցութեամբ Զամոյսքի ա-